ԿՈԳՈՎԻՏԻ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳՐԻ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ԳՈՐԳԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ՇՈՒՐՋ

ՊՈՂՈՍՅԱՆ ԱՇԽՈՒՆՋ
Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ԳՊՀ դասախոս
e-mail: ashkhunjpoghosyan@gmail.com

Սույն հոդվածի նպատակը պատմական Հայաստանի Կոգովիտ գավառի հայոց գորգագործական մշակույթը հետազոտելն է: Կոգովիտի՝ հայոց կողմից գորգագործությամբ զբաղվելու մասին վկայող տարաբնույթ փաստերի հիման վրա հեղինակը գտնում է, որ այդ տարածաշրջանը պատմական Հայաստանի գորգագործական մշակույթի ավանդական կենտրոններից մեկն էր: Բայց դրա ամբողջական պատկերի բացահայտման գործում կարևոր է տարբեր ժամանակներում այդտեղ հաստատված առանձին էթնիկական հանրույթների մշակութային նկարագրի վերհանումը: Այդ առումով հնարավորինս ուշադրություն է դարձված նաև XVI-XVII դդ. սկսած տեղի բնակչության մեծամասնությունը կազմած քրդական ցեղերի կենսագործունեության, մասնավորապես գորգագործությամբ զբաղվելու հետ կապված հարցերին:

Բանալի բառեր՝ *Կոգովիտ, գորգագործական մշակույթ, քոչվոր, Բայազետ, ներգաղթ, տեղաշարժ, վերնախավ:*

Տարածաշրջանի առանձնահատկությունները: Մեծ Հայքի Այրարատ նահանգի Կոգովիտ գավառը զբաղեցնում է Մասիս սարի հարավարևելյան տարածքն ու անմիջականորեն սահմանակից է Արտազ, Մասյացոտն, Ճակատք, Բագրևանդ և Ծաղկոտն գավառներին /նկ. 1/:

Պատմականորեն գտնվելով Այրարատի, Սյունիքի ու Վասպուրականի հյուսիսարևելյան գավառների անմիջական փոխառնչությունների գոտում՝ Կոգովիտն իրականում դարձել էր հայոց մշակութային տարաբնույթ ավանդույթների խառնարան: Այս առումով չափազանց կարևոր գործոն էր նաև այն, որ տարածաշրջանի կենտրոն Բայազետը կամ նախկին Դարոյնքը Արևելք-Արևմուտք քարավանային ճանապարհներից մեկի հանգուցային կետերից էր: Պատահական չէր, որ հենց այդտեղ էր հիմնադրել իր Արշակավան մայրաքաղաքը հայոց Արշակ II արքան: Պատմամշակութային առումով պատմական Հայաստանում նման խառնարաններ էին բազմաթիվ տարածաշրջաններ, այդ թվում՝ Դերսիմը, Հյուսիսային Արցախը, Լոռին ու Տավուշը, որոնցից յուրաքանչյուրում դա ձևավորվել, կազմավորվել է տեղական յուրահատկությունների և պատմական ու ժողովրդագրական տարատեսակ

հանգամանքների բերումով[1]: Դրանց խորքային, բազմակողմանի ուսումնասիրման համար անհրաժեշտ դաշտային ազգագրական հետազոտություններ իրականացնելու վերջին լավագույն ժամանակշրջանը XIX դարի երկրորդ կեսն ու XX դարի առաջին տասնամյակներն էին: Այդ ժամանակաշրջանին բնորոշ աշխարհաքաղաքական, տնտեսավարման ու հասարակական կյանքի պայմաններում դեռևս հնարավոր էր հավաքել հայոց ժողովրդական կիրառական-գեղազարդման արվեստին վերաբերող ազգագրական որոշակի տեղեկություններ: Դրանք մեր ժամանակներում կունենային այն անփոխարինելի նշանակությունը, որն ունի Երվանդ Լալայանի և այլոց գրի առած ժառանգությունը հայոց ազգագրությանը վերաբերող ուսումնասիրություններն իրականացնելու գործում:

Խնդրո առարկա հարցադրումներին վերաբերող դաշտային ազգագրական հավաստի տեղեկությունների հավաքման հնարավորությունը Արևմտյան Հայաստանում և Փոքր Ասիայում Մեծ եղեռնից հետո դարձել է անհնարին ու ժամանակավրեպ: Ընդհանրապես հայ իրականության մեջ ժամանակին ժողովրդակիրառական արվեստը, այդ թվում՝ գորգագործական մշակույթը դուրս էր մնացել ուսումնասիրողների կամ հետաքրքրվողների ուշադրությունից: Ազգագրագետներն ու բանահավաքները հիմնականում գրի են առել հոգևոր մշակույթին վերաբերող նյութերը: Այս իրավիճակն էլ չափազանց դժվարացնում է Արևմտյան Հայաստանի՝ այդ թվում խնդրո առարկա տարածաշրջանի գորգագործական կենտրոնների ու մանավանդ դրանց բնորոշ գորգերի տիպերի բացահայտման գործը: Շեշտենք, որ այդ հանգամանքից օգտվելով է, որ օտարներին հաջողվում է առանց երկար-բարակ մտածելու և առանց որևէ հիմնավորման յուրացնել պատմական Հայաստանի հայաթափ եղած տարածաշրջաններում հազարամյակների ընթացքում ստեղծված հայոց պատմամշակութային ժառանգությունը:

Նկ. 1. Կոգովիտ գավառի տեղագրությունը:

Այդուհանդերձ, կորցրածը թեկուզ մասնակիորեն ետ բերելու համար կան որոշակի միջոցներ, ու թեև դրանք շատ չեն, սակայն պատմահամեմատական համա-

[1] Այս առումով տե՛ս **Ա. Պողոսյան**, Դերսիմի հայոց գորգագործական մշակույթի մասին /պատմաազգագրական ակնարկ/.-«Էջմիածին», 2012, Ա, էջ 51-70, նույնի՝ Դերսիմի հայոց գորգագործական մշակույթի ուսումնասիրման հիմնախնդիրների ու տարածաշրջանի պատմական ժողովրդագրության առանձնահատկությունների մասին /պատմաազգագրական ակնարկ/, «Գիտական հոդվածների ժողովածու», Գավառի պետական համալսարան, 13, Եր., 2011, էջ 187-195:

դրումներ կատարելու ճանապարհով հնարավորություն են տալիս ինչ-որ չափով բացահայտել հայոց բնորոշ գորգերի տիպերը:

Այն, որ Կոգովիտում գոյություն է ունեցել զարգացած գորգագործություն, մատնանշում են տարատեսակ վկայություններ: Դրանք շատ չեն, բայց միանգամայն խոսուն են և տպավորիչ: Այդպիսինն է Մեծ եղեռնի ընթացքում Բայազետի գավառի Ավթանա գյուղում քրդերի կատարած թալանին վերաբերող մի վկայություն, որի՝ հեղինակի պատմելով, միայն իրենց տնից տարել են «**15 հատ եզ, 3 ձի, 7 կթան, 140 գլուխ ոչխար, 45 հատ կով, 2 խալի, 3 ձեռք անկողին, 2 կազան /պղնձե մեծ աման/, 2 քեչա և տնայի ամեն ունեցած-չունեցածնիս**»:[1]

Կոգովիտում, մասնավորապես Բայազետում գործված գորգերի մասին մի կարևոր վկայություն էլ գրի է առնվել Արմավիր գյուղում /նախկինում՝ Ղուրդուղուլի/, որտեղ հաստատվել էին 1878 թվականին Արևելյան Հայաստան ներգաղթած բայազետցիների մի փոքր մասը[2]: Խոսքը վերաբերում է բայազետցի Տեր-Հարությունյանների գերդաստանին, որոնք նախկինում եղել են հոգևորականներ: Գերդաստանի շառավիղ Հարություն Տեր- Հարությունյանի պատմելով՝ իրենք ունեցել են Հին Բայազետից բերված և հենց իրենց պապական տանը գործված մեկ տասնյակից ավել գորգեր[3]: Այս տեղեկություններն անմիջականորեն վկայում են տեղում գորգագործության գոյության փաստը: Բնականաբար մենք կարևորում ենք նաև Կոգովիտում ու մերձակա գավառներում հայոց կենցաղում գորգերի օգտագործմանը վերաբերող տեղեկությունները:

Այս դեպքում նկատի ունենք պատմական Վասպուրականի Արտազ, Այրարատի Մասյացոտն և Բագրևանդ գավառներին ու Սյունիքին վերաբերող տեղեկություններ: Դրանք բոլորն էլ իրար հետ կապված են եղել տնտեսական ու առևտրական առումներով և ունեցել են կենցաղավարման միևնույն ավանդույթները: Ընդ որում դրան մեծապես նպաստել է նաև այն, որ 1833 թվականին ստեղծվել է Ատրպատականի միացյալ թեմ, որում միավորվել էին նախկինում ինքնուրույն մի քանի թեմեր, դրանց թվում նաև Արտազի թեմը, որի աթոռանիստը հենց Բայազետին սպասարկող Թադևոս Առաքյալի վանքն էր:

Սակայն խնդրո առարկա տարածաշրջանի հայոց ազգագրական և ընդհանրապես մշակութային նկարագրի մասին պատկերացում ստանալու հիմնական աղբյուրը Գեղարքունիքն է: 1830 թվականին ու դրանից հետո էլ շարունակված ներգաղթների արդյունքում այստեղ է հաստատվել Բայազետից ու մերձակա գա-

---

[1] Վշտապատում, հայոց մեծ եղեռնը ականատեսների աչքերով, կազմողներ Ա.Վիրաբյան, Գ.Ավագյան, Եր., 2015, էջ 340:

[2] Ա. Պողոսյան, Դաշտային ազգագրական նյութեր, 2015 թ. /հեղինակի անձնական արխիվ/:

[3] Գորգերի մի մասը վաճառել էին 1930-ական թվականներին, մնացածները՝1980-ական թվականներին:

վառներից արևելյան Հայաստան ներգաղթած հայերի մեծագույն մասը[1]: Ընդ որում, որպես բնակության նոր վայր՝ այդ տարածաշրջանի ընտրությունը կատարել են բայազետցիները, ու թույլտվություն ստանալու նպատակով էլ նամակով գեներալ Պասկևիչին էին դիմել Բարսեղ և Մկրտիչ Արծրունի իշխանները՝ Բայազետ քաղաքի ու շրջակա հայաբնակ գյուղերի 11 այլ երևելիների հետ միասին[2]:

Գորգը Կոգովիտի հայոց կենցաղում: Հայտնի է, որ տեղական առանձնահատկություններով հանդերձ, վերն ասված տարածաշրջաններին բնորոշ էին նաև կենցաղավարման ու տնտեսական զբաղմունքների միանման համալիրներ, և այդ հանգամանքը վերաբերում է նաև գորգագործական մշակույթին ու գորգի կիրարկման ձևերին: Հայոց գորգագործական մշակույթի ուսումնասիրման հարցում հսկայական ավանդ ներդրած Հարություն Քուրտյանի հավաքած նյութերի թվում կան այդ տարածաշրջաններին վերաբերող մի շարք տեղեկություններ, որոնք հնարավորություն են տալիս պատկերացում կազմել այդ դրսևորումների մասին: Օրինակ՝ Թեհրան գնալու ճանապարհին՝ 1804-5թթ., Նապոլեոն Բոնապարտի հանձնակատար Պիեռ Ամադեյ Ժուբերը /1779-1847/, հյուրընկալվելով Բայազետի գավառի Արծափ գյուղի տանուտերի տանը, գրել է, որ հյուրասիրվել էր բակում, ուր իրենց պատվին «բերեցին փսիաթներ, գորգեր, ջուր, կաթ և բրինձ»[3]:

Հյուրընկալման այդ նույն նկարագիրն այդ նույն դարաշրջանում դիտարկվում էր նաև Կոգովիտին մերձակա գավառներում: Հյուրընկալման միևնույն նկարագիրն է իր գրառումներում տվել անգլիացի գնդապետ Ջոն Ջոնսոնը: Նա 1817 թվականին, լինելով Նախիջևանում, հիշում է, որ «մենք հայու մը տան և պարտեզին մեջ կեցանք... անիկա գորգեր սփռեց, բարձեր տեղավորեց, մեզի հաց և ջուր բերավ, ու ամեն ինչ, որ ան կենթադրեր թե կցանկանայինք...»[4]: Ավելի ուշ՝ 1830-ական թվերին, ամերիկացի միսիոներներ Էլեն Շմիդտն ու Հենրի Թվինգտը Զանգեզուրի Տեղ գյուղում հյուրասիրվել են տանուտերի տանը, որը նրանց վրա մեծ տպավորություն թողեց գորգերով, անկողիններով ու ծածկոցներով[5]: Նույն նկարագիրը նրանք տվել են նաև Սիսականի Լոր ու Շաղատ գյուղերի վերաբերյալ, որտեղ հյուրընկալվել էին առաջինում տանուտերի, երկրորդում՝ քահանայի տանը[6]:

Որպես ականատես՝ այդ նույն ավանդույթի մասին տեղեկություններ է հաղորդել հայ նշանավոր պատմավիպասան Ռաֆֆին: Մասնավորապես, նկարագրելով Սալմաստի Փայաջուկ գյուղում երեցփոխանի տանը իրեն հյուրընկալելը, նա գրում

---

[1] **Հ. Հարությունյան,** Նոր Բայազետի գավառը 1828-1913 թթ., Եր., 2008, էջ 43-62,139-140, **Ա. Պողոսյան,** Հայաստանի պատմական ժողովրդագրություն: Ուսումնամեթոդական ձեռնարկ մագիստրատուրայի ուսանողների համար: Եր., 2018, էջ 53-54,68-73:

[2] Այս մասին տե՛ս **Հ. Հարությունյան,** նշվ. աշխ., էջ 68-69:

[3] **Քուրտյան Հ.**, Գորգը հայոց մոտ, Վենետիկ, 1947, էջ 51,**Ուղեգրություններ,** թարգմ. Հովհ. Հակոբյանի, Եր., 1934, հ. Զ, էջ 152:

[4] **Քուրտյան Հ.**, Գորգը հայոց մոտ, էջ 51:

[5] **Քուրտյան Հ.**, նշվ. աշխ., էջ 51-52:

[6] Անդ՝ 51-52:

է, որ ընթրիքին ինքը ծալապատիկ նստած էր «ասիական թանձր գորգի վրա»[1]: Ընդ որում Ռաֆֆին հավելում է, որ դա Ատրպատականի առավել հայաբնակ գավառն է, «ուր այժմ /1870-ականների վերջ- Ա.Պ./ կա մինչև հազար տուն հայ ժողովուրդ, իսկ 1827 թվականից առաջ հայոց գերդաստանների թիվը հասնում էր մի քանի հազարի[2]: Նույն գյուղի մասին պատմում է. «կանաչազարդ արոտամարգերի մեջ կազմված են հովիվների վրանները, աղջիկները բուրդ են մանում, կանայք գորգեր են գործում...»[3]: Աղբակի հայոց մասին էլ գրում է, որ «գյուղորայքում նրանք զբաղվում են երկրագործությամբ ու անասնապահությամբ: Նոքա գիտեն յուրյանց անասունների բուրդից գործել հագուստի բոլոր պիտույքները, որոնցմե պատրաստում են վերարկուներ, շալվարներ, քազախաներ, զանազան տեսակ օթոցներ, կարպետներ և այլն, որք վաճառքի նյութ ևս դառնում են: Այդ արհեստը ըստ մեծի մասի կատարվում է կանանց ձեռքով, որք և մանում են բուրդից թելեր և գործում են դրանք[4]»:

Այս ամենը վերաբերում են XIX դարին ու հստակորեն ներկայացնում են գորգագործական մշակույթի կենտրոններում գորգերի գործածման նկարագիրը: Ըստ այդմ էլ պարզվում է, որ՝

ա/ գորգերը հանվում էին միայն կարևոր հյուրեր ընդունելու առիթով:

բ/ Գորգեր եղել են միայն վերնախավի, այս դեպքերում՝ գյուղական վերնախավի տներում:

Դրանք մի կողմից հնարավորություն են տալիս եզրակացնել, որ պատմական Կոգովիտում հայոց ավանդական զբաղմունքներից մեկն էլ գորգագործությունն էր, մյուս կողմից էլ մատնանշում են գորգեր ունեցողներին՝ տեղական աշխարհիկ ու հոգևոր վերնախավին, որոնք էլ հնարավորություն ունեին կամ իրենց տներում գործել իրենց համար անհրաժեշտ գորգեր կամ էլ դրանք պատվիրել տնայնագործ գորգագործներին:

Ըստ էության այդպիսիների թվում էր Տեր-Հարությունյանների գերդաստանը Բայազետում, որի ճյուղերից մեկն էլ հաստատվել էր Արմավիրում:

Գորգի գործածման հետ կապված վերն ասվածները կարևորում ենք այն նաև առումով, որ դրանք հաստատում են տարբեր առիթներով ասված մեր այն տեսակետը, ըստ որի գորգն ի սկզբանե ծիսապաշտամունքային, իսկ այնուհետև էլ վերնախավային երևույթ էր: Բնականաբար նույնիսկ ուշ միջնադարում գորգեր առավելապես գործել են աշխարհիկ վերնախավի տներին կից արհեստանոցներում ու վանական խոշոր համալիրներերում: Ընդ որում պետք է նկատի ունենալ, որ աշխարհիկ վերնախավի տներին կից արհեստանոցներում գորգագործությամբ առաջին

---

[1] **Ռաֆֆի,** Ուղեգրություններ, Ճանապարհորդություն Պարսկաստանի, Երկերի ժողովածու, հ.9, Եր., 1987, էջ 64:

[2] **Ռաֆֆի,** նշվ. աշխ., էջ 70:

[3] **Ռաֆֆի**, նշվ. աշխ, էջ 86:

[4] **Ռաֆֆի**, նշվ. աշխ., էջ 108:

հերթին զբաղվում էին հենց տվյալ գերդաստանի կանայք ու աղջիկները: Անշուշտ, գոյություն ունեին նաև տնայնագործներ, որոնք, ըստ իս, կենտրոնացված էին հատկապես իշխանանիստ ու վանական խոշոր համալիրների մերձակայքներում եղած բնակավայրերում:

Ժողովրդագրական իրավիճակի մասին: Մշակութային համալիրների ծագումնաբանության, այդ ոլորտում այս կամ այն էթնիկական հանրույթի ունեցած դերի բացահայտման հարցում առաջնային նշանակություն ունի տվյալ տարածաշրջանի ժողովրդագրական նկարագիրը: Տարածաշրջանի, մասնավորապես անմիջական հարևան Մակվի խանության ժողովրդագրության ու նաև հայերի քանակի մասին ուշագրավ տեղեկություններ կան հայտնի արևելագետ Վ. Մինորսկու տեղագրական հետազոտություններում: Նա գրում է, որ 1905 թ.՝ իր այնտեղ գտնվելու ժամանակ, հայեր եղել են միայն չորս բնակավայրերում՝ Մակվում, Քիշմիշթափայում, Ղարաքիլիսայում և Դարաշամբում, ընդ որում նա գտնում է, որ «բացի թաթարներից ու քրդերից, Մակվում կա ուշադրության արժանի երրորդ ազգություն՝ հայերը, որոնք Վանի և Արարատի շուրջը IX- XII դարերում ունեցել են իրենց Վասպուրականի թագավորությունը, մինչդեռ աստիճանաբար մահմեդականների շրջանում նվազեցին և ներկայիս Մակվի ողջ տարածքով մեկ սփռված եկեղեցիներն են մատնանշում նրանց երբեմնի քանակությունը: Նույնիսկ ոչ վաղ անցյալում՝ 30 տարի առաջ, հայեր կային, օրինակ, այժմ արդեն միայն բացառապես մահմեդականներով բնակեցված Դանալի և Վարմահզար գյուղերում[1]: Նույնը հիշատակել է Ա. Թոխմախյանը, ըստ որի՝ «Ավաջուղի /Կոգովիտի արևլյան մասը-Ա. Պ./, Մակւայ, Գարայնիի բոլոր թաթարաբնակ գյուղերումը եկեղեցիներ կան, բոլորն էլ ավերված, գետերի ափերին կառուցված են վանքեր ու մատուռներ, խաչերն ու խաչարձանները ավերված են»[2]:

IX-XII դարերին վերաբերող Վ. Մինորսկու ենթադրությունները միանգամայն իրական են, ու դրա ապացույցը Դոմինիկյան հոգևորական Ժուրդեն դը Սևերակի դիտարկումներն են, որոնք նա կատարել է 1320 թվականին՝ Հնդկաստան գնալու ճանապարհին: Ուղեգիրը նշում է, որ «այս նահանգում /այսինքն՝ Հայաստանում /մեծ մասամբ ապրում են հերձվածող հայեր /այսինքն՝ Հայ Առաքելական եկեղեցու հետևորդներ-Ա. Պ.»/[3]: Ավելի ուշ՝ 1403-1406 թվականներին, իսպանացի Ռույ Գոնցալես Դի Կլավիխոն, անցնելով այդ տարածքներով, վկայում է, որ Լենկ Թեմուրի ու նրա հաջորդների տիրապետության ժամանակ հայկական մի շարք իշխանական ընտանիքներ շարունակում էին պահպանել իրենց կիսանկախ իշխանությունը: Որպես օրինակ՝ նա հիշատակել է Մակվի ամրոցի հայազգի իշխան Նուր-ադ-դինին,

---

[1] **Минорский В.,** Отчет о поездке в Макинское ханство. «Материалы по изучению Востока», вып. 1., С.Петербург, 1909, էջ 24, այս մասին տես նաև՝ **Արմեն Հախնազարյան,** Արտազի երեք վանքերը, ՀՃՈՒ հրատարակչություն, գիրք ԺԵ, Եր. , 2012, նշվ. աշխ., էջ 23:

[2] **Ա. Թոխմախյան**, Մասիսի լեռների հարավային ստորոտները, Բ մաս, Թիֆլիս, 1882, էջ 27:

[3] **«После Марко Поло»//** Путешествия западных чужеземцев в страны трех Индии. Перевод с латинского и староиталянского языков, введение и примечания Я. М. Света, М. М. 1968, стр. 138, տես նաև՝ **Արմեն Հախնազարյան,** նշվ. աշխ., էջ 25:

գրելով, որ նրա բերդը երկար պաշարումից հետո չի կարողացել գրավել նույնիսկ Լենկ Թեմուրը[1]: Այսինքն՝ ակնհայտ է, որ հայոց պետականության անկումից մի քանի դար էլ անց պատմական Հայաստանի արևելյան մասերում շարունակում էին գոյատևել հայոց իշխանական տների բեկորները, ու հայերն էլ դեռևս կազմում էին բնակչության գերակշիռ մասը:

Հայտնի է, որ Արևելյան Հայաստանի ժողովրդագրական նկարագրի արմատական փոփոխությունները տեղի ունեցան 1520-ականներից մինչ 1620-ական ական թվականներն ընկած ժամանակահատվածում: Այդ հարյուրամյակի ընթացքում էր, որ սուլթան Սելիմն ու իր հաջորդները կազմակերպեցին քրդական ցեղերի վերաբնակեցումը Օսմանյան Թուրքիայի և Սեֆյան Պարսկաստանի սահմանագծի երկայնքով մեկ՝ Բայազետից մինչ Սալմաստ[2]: Բացի այդ էլ Շահ Աբբասն էլ իր հերթին կազմակերպեց հայոց մեծ բռնագաղթն ու ազատված տարածքներում էլ իրականացրեց թուրքմենական ցեղերի բնակեցումը[3]:

Հետագայում դրանք համալրվեցին նորանոր ցեղերով, որի արդյունքում է, որ այդ սահմանային տարածքներում բնակչության ընդհանուր թվաքանակում գերակշռություն ստացան համարյա կիսանկախ քրդական ցեղերը: Միաժամանակ եղած տեղեկություններից կարելի է ենթադրել, որ քրդերը հիմնականում բնակվում էին գյուղերում, իսկ բուն Բայազետում բնակչության մեծամասնությունը կազմել են հայերը: Համենայնդեպս այդպիսի տպավորություն է ստացել Արտեմ Արարատյանը, երբ 1780-ականների վերջին եղել է Բայազետում, որտեղ տեսել էր նաև չորս հայկական եկեղեցի[4]: Նա տեղեկացնում է նաև, որ այդ գավառի արևմտյան մասերում ապրում էին մեծաքանակ եզդիներ[5]:

Նկ. 2. Գորգ. **«Կոգովիտ»** տարբերակ:

Բայց հայերն ապրում էին նաև գյուղերում: Ակադեմիկոս Աշոտ Մելքոնյանն իր ձեռքի

---

[1] Տե՛ս **Մուրադյան Պ.**, Գրիգոր Տաթևացու «Ոսկեփորիկի» և նրա պատվիրատուի ինքնության խնդիրը- «Էջմիածին» պաշտոնական ամսագիր Ամենայն Հայոց կաթողիկոսութեան Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի, Էջմիածին, Սեպտեմբեր, 2005, էջ 52:

[2] Տե՛ս **Պողոսյան Ա.,** Հայաստանի պատմական ժողովրդագրություն /ուսումնամեթոդական ձեռնարկ մագիստրատուրայի ուսանողների համար/, Եր., 2018, էջ 34-35:

[3] Տե՛ս **Հովհաննիսյան Ա.,** Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք առաջին, Եր., 1957, գիրք երկրորդ, Եր., 1959, էջ 96-99::

[4] Жизнь **Артемия Араратского,** Издание подготовил К. Н. Григорян при участии Р. Р.Орбели, Литературные памятники, М.,1981. էջ 50:

[5] Жизнь **Артемия Араратского** , էջ 54:

տակ եղած տեղեկությունների հիման վրա նշում է, որ 1828 թվականի սեպտեմբերի դրությամբ, այսինքն՝ նախքան ներգաղթը Բայազետի վարչական տարածքում կար հայաբնակ 20 գյուղ, ու բացի դրանից՝ հայեր ապրում էին նաև չորս թուրքաբնակ ու վեց քրդաբնակ գյուղերում: Հայոց ընդհանուր թվաքանակը կազմում էր շուրջ 36000 մարդ, որոնց ճնշող մեծամասնությունը ապրում էր Բայազետ քաղաքում[1]: Այդպիսի տպավորություն են թողնում նաև ուղեգիր տեր Բաղդասար Գասպարյան Շուշեցի քահանայի դիտարկումները: Նա 1820-ական թվականներին, լինելով այդտեղ, գավառի մասին գրել է, որ «...**և ունի բազում գեղարենքս, որք են բնակեալք ի ազգես Հայոց կամ ի մահմատականաց, որ կոչին Տըպլի քուրդ**»[2]: Բայազետի քաղաքային բնակչության էթնիկական կազմին անդրադարձել է նաև Ղուկաս Ինճիճյանը, ըստ որի՝ քաղաքի բնակչության մեծ մասը՝ մոտ 5000 տուն, քուրդ են ու միայն 700 տունն են հայ[3]: Վերը բերված բոլոր տվյալները, ինչպես ասվեց վերը, վերաբերում են նախքան 1830 թվականը տեղի ունեցած ներգաղթը, որի հետևանքով, բնականաբար, զգալիորեն նվազել էր քաղաքի ու գավառի հայոց թվաքանակը: Եվ իրականում էլ, ըստ Ռաֆֆու հավաքած տեղեկությունների, 1877 թվականին, նախքան շեյխ Ջալալեդդինի առաջնորդած քրդերի կողմից Բայազետի պաշարումն ու գրավումը, այնտեղ կար չորս հարյուր տուն հայ[4]: Այդ կապակցությամբ Ռաֆֆին շեշտել է նաև, որ «Բայազետի հայերը հարուստ էին, այս պատճառով էլ հափշտակությանը և կողոպուտին ոչ թիվ կար ոչ էլ հաշիվ...»[5]:

Այն, որ այս տարածաշրջանում մեծ թվով քրդեր էին բնակվում ու դրանց ներկայությունը առևտրականների համար վտանգներ էր հարուցում, հիշատակել է 1720-ական թվականներին առևտրական լայն գործունեություն ծավալած Եղիա Կարնեցին: Նկատի ունենալով Բայազետով անցնելու հեռանկարը՝ նա նշել է, որ «քանի որ պարսից հողումն եմ, երկիւղ չկայ ինձ աստուծով, բայց քրտի հողումն կերկնչիմ»[6]: Եղիա Կարնեցու այս արտահայտությունը նաև մատնանշում է տարածաշրջանում քրդական տարրի ակնհայտ գերիշխանության փաստը:

---

[1] Տե՛ս **Հ. Հարությունյան,** Նոր Բայազետի գավառը 1828-1913 թթ, Եր., 2008, էջ 82, թիվ 84 տողատակի հղում:

[2] Տեր **Բաղդասար Գասպարյան Շուշեցի**, Ծաղկաքաղ աշխարհացոյց: Տպագրության պատրաստեց՝ Հ. Քյուրտյան.«Բանբեր Մատենադարանի», 9, Եր., 1969, էջ 302:

[3] Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի Ասիոյ, Եւրոպիոյ, Ափրիկոյ և Ամերիկոյ: Վենետիկ, 1806. աշխատութեամբ Տեառն Հայր **Ղուկաս վարդապետի Ինճիճեանի** կոստանդնուպոլսեցւոյ, Մասն առաջին Ասիա, Հատոր Ա, Վենետիկ, 1806, Ի վանս Սուրբ Ղազարու, էջ 114:

[4] **Ռաֆֆի,** Ճանապարհորդություն Թիֆլիսից մինչև Ագուլիս, Երկերի ժողովածու, հ.9, Եր., 1987, էջ 183:

[5] Անդ:

[6] **Եղիա Կարնեցու** դիվանը, առաջաբանը և ծանոթագրությունները՝ պրոֆ. Ա.Աբրահամյանի, Եր.,1968, էջ 207, 209:

Կոգովիտում և ընդհանրապես Վասպուրականի արևելյան ու Իրանի վերահսկողության տակ եղած հայաշատ գավառներում հայոց թվաքանակը 1830 և 1878 թվականներին կատարված ներգաղթերի արդյունքում կտրուկ նվազել էր, և այդ տարածաշրջաններում ձևավորվել է հենց այն ժողովրդագրական նկարագիրը, որը 1905 թվականին դիտարկել էր Վ. Մինորսկին: Սակայն դրանից չի հետևում, որ այդտեղ հայերը դադարել էին նշանակալից դեր կատարելուց: Իրականում արհեստավորական ու առևտրական շերտը կազմում էին հայերը, մինչդեռ մահմեդական ցեղերի զբաղմունքը խաշնարածությունն էր: Հայոց կողմից արհեստներով զբաղվելու վերաբերյալ ուշագրավ տեղեկություններ են պարունակում Սուրբ Թադևոս Առաքյալի վանքի ու մերձակա հուշարձանների վիմագրությունները, որոնք հրատարակել է հուշարձանագետ Արմեն Հախնազարյանը[1]: Դրանք նաև պատկերացում են տալիս Կոգովիտի ու հարևան Արտազի մշակութային ու ժողովրդագրական փոխառնչությունների մասին: Մասնավորապես Սուրբ Թադևոս Առաքյալի վանքի 1611-1766 թվականներին վերաբերող վիմագիր արձանագրություններում հիշատակված են վանքի համար շինարարական ու նվիրատվական գործեր իրականացրած բայազետցի մելիքական երեք գերդաստանների անուններ[2]:

Դատելով եղած տեղեկություններից՝ բայազետցիների մի որոշ մասը 1830-ական թվականներից հետո, նեղվելով տեղի իշխանությունների վայրագություններից, տեղափոխվել էին Մակու ու այնտեղ էլ, ինչպես հաղորդում է Արսեն Թոխմախյանը, զբաղվում էին արհեստներով ու առևտրով, մասնավորապես Կարին էին տանում տեղական գորգեր, կարպետներ, մազեղեն, բամբակ[3]: Իսկ բնիկ մակվեցիների մասին էլ այս հեղինակը նշում է, որ «նրանք հեռացել են ու նրանց փոխարինել են Բայազետից ու Տաճկահայաստանից եկածները»[4]:

Ամեն դեպքում մենք պետք է արձանագրենք, որ տարածաշրջանում քրդական ցեղերի հայտնվելուց ու հայ տարրի մի նշանակալի մասին այդտեղից հեռացնելուց հետո էլ Կոգովիտում և մասնավորապես նրա կենտրոն հանդիսացած Բայազետում մինչ 1870-ական թվականներն էլ շարունակել էին գոյություն ունենալ բավականին թվով ու նկատելի հեղինակություն վայելող մեծահարուստներ: Այս առումով վերն ասվածներին կարող ենք ավելացնել նաև Ղուկաս Կարնեցու կողմից Բայազետի տարածաշրջանի աշխարհիկ ու հոգևոր ազդեցիկ հայերին 1780-ական թվա-

---

[1] **Արմեն Հախնազարյան,** նշվ. աշխ., էջ 25:

[2] Բացի մելիքներից՝ վիմագրերում հիշատակված են նաև այլ բայազետցիներ, որոնք վանքի համար իրենց ծախսերով կատարել են շինարարական ու վերանորոգչական աշխատանքներ, նվիրատվություններ տե՛ս **Արմեն Հախնազարյան,** նշվ. աշխ., էջ 160, 161,162, 170, 162, 167, 163, 165, 184 և այլն:

[3] **Ա. Թոխմախյան**, նշվ. աշխ., էջ 27:

[4] **Անդ՝** էջ 27:

կաններին ուղղված նամակները: Շեշտենք նաև, որ նման անձնավորությունների թվում առավել հայտնիները Բայազետի հայերի ներգաղթի ընթացքում կարևոր դերակատարում ունեցած Արծրունի իշխանական տան շառավիղներն էին, որոնք 1826-28թթ. ռուս-թուրքական պատերազմի ընթացքում մեծ օգնություն են մատուցել ռուսական զորքերին, իսկ այնուհետև էլ նաև Արևելյան Հայաստան ներգաղթողներին:

Կոգովիտի գորգագործական մշակույթի ուսումնասիրման սկզբունքների մասին: Վերը բերված նյութերը թույլ են տալիս եզրակացնել, որ խնդրո առարկա տարածաշրջանը ուներ գորգագործական հարուստ ավանդույթներ: Այլ հարց է, որ ծայրահեղ սուղ են այդտեղ ստեղծված գորգերի տիպերի ու դրանց գեղազարդման համակարգերին վերաբերող տեղեկությունները, ու բացի դրանից էլ գործնականում հայտնի չեն տարածաշրջանում հաստատված էթնիկական հանրույթների կողմից ստեղծված գորգերի առանձնահատկություններին վերաբերող տվյալներ:

Ընդ որում քրդական ցեղերը, լինելով իրանական լեզվաընտանիքին պատկանող առաջավորասիական բնիկ ցեղերից մեկն ու հազարամյակներ շարունակ շփվելով զարգացած գորգագործական մշակույթ ունեցող ժողովուրդների, այդ թվում՝ հայերի հետ, այսպես թե այնպես տեղյակ էին գորգագործական հմտություններին: Այս առումով ուշագրավ են Ղուկաս Ինճիճյանի դիտարկումները: Իր ձեռքի տակ եղած տեղեկությունների հիման վրա նա նշում է, որ քրդական ցեղերը, կենցաղավարման առումով լինելով նստակյաց և քոչվոր, բնորոշվում էին որոշակի առանձնահատկություններով: Մասնավորապես քոչվոր կամ վրանաբնակ քրդական ցեղերի՝ «բնակեալք ի պայազիտ, յալաշկերտ, ի խնուս, ի մալազկերտ և ի մուշ», զբաղմունքը անասնապահությունն էր, «արուեստ մանավանդ առկանայս նոցա գտանի, որք գործեն գորգ, **սէտճատէ**, կարպետ, քուրձ այսինքն չուալեղէն. թեռ, զոր բառնա ն 'ի վերայ եզանց...»[1]: Սրանով չեն սահմանափակվում քրդական ցեղերի գորգագործությամբ զբաղվելուն վերաբերող տեղեկությունները, որոնք վերաբերում են նաև նստակյաց քրդերին:

Բայց քրդական ցեղերին վերաբերող գորգերի և ընդհանրապես կենցաղավարման հատկանիշներին անդրադառնալիս անհրաժեշտ է նկատի ունենալ մի շատ կարևոր հանգամանք. այդ ցեղերից որոշները քրդացած հայեր են: Դա վերաբերում է, օրինակ, Արտազում և Աղբակում բնակված Շիկակի ու Սասունում հաստատված Մոտկանցի քրդական ցեղերին[2]: Ըստ Ղ. Ինճիճյանի՝ հայկական Սլկունյաց և Ռշտունյաց նախարարական տների իսլամացած ճյուղերից են կազմավորվել

---

[1] **Ղ. Ինճիճյան,** նշվ. աշխ., էջ 54:

[2] **Յ. Շահպազեան,** Քիւրդօ-հայ պատմութիւն, Կ.Պոլիս, «Արաքս» տպարան, 1911թ., էջ 26-27:

Սլիվանցի ու Ռոշկանցի ցեղերին պատկանող քրդերը[1]: Նմանատիպ տեղեկությունները չափազանց շատ են[2]: Ասվածը թույլ է տալիս մեզ արտերկրի մասնագետների կողմից քրդական այդ ցեղերին վերագրված գորգերը նկատել իբրև հայոց գորգագործական մշակույթի ավանդույթները կրող նմուշներ և դրանց հիման վրա ամբողջացնել մեր պատկերացումները արևմտյան Հայաստանի այս կամ այն գորգագործական կենտրոնի պատմամշակութային նկարագրի մասին:

Կոգովիտի հայոց գորգագործական ավանդույթների մասին, անշուշտ, պատկերացում ի վիճակի են տալու Գեղարքունիքի գորգագործական կենտրոններում տարածում ունեցած գորգերի տիպերը: Դրանց տեխնոլոգիական և գուներանգային առանձնահատկությունների շարքում պետք է բացահայտել հենց պատմական Կոգովիտի գորգագործական կենտրոններին բնորոշ ավանդույթները: Ընդ որում այդտեղ հաստատվել էին Բայազետ քաղաքից ներգաղթածների մեծագույն մասը և համեմատաբար քիչ են գավառի գյուղերից /Արծափ, Քոռուն, Մոսուն, Մարիբեխ և այլն/ ներգաղթած հայերը[3]: Բացի Գեղարքունիքից՝ այդ ավանդույթները պետք է փնտրել նաև Արարատյան դաշտավայրի որոշ բնակավայրերում, օրինակ՝ Վեդիում, որի հետ կապված՝ Ռաֆֆին 1878 թ. գաղթականությանը վերաբերող իր ուղեգրությունում նշել է, որ «Դավալուի մեջ գտնվում են մոտ քառասուն ընտանիք գաղթականներ, դրանք բայազետցիք են, այն փախստականները, որ գնացել էին Պարսկաստանի Մակու քաղաք, այնուհետև էլ տեղափոխվել են այստեղ...»[4]:

Վերը շարադրվածներից կարող ենք եզրակացնել, որ Կոգովիտը պատմական Հայաստանի գորգագործական մշակույթի կետրոններից էր: Ըստ էության, եղած տեղեկությունները հնարավորություն են տալիս բացահայտել նաև այդ կենտրոնին բնորոշ գորգերի մի շարք տիպեր /նկ. 2/: Սակայն խնդիրն այն է, որ դրանք ունեն տարածման բավականին տարբեր արեալներ, բացի դրանից, ինչպես տեսանք, այս տարածաշրջանը աչքի էր ընկնում իր ժողովրդագրական նկարագրի խայտաբղետությամբ: Ուստի հարկ կա գորգերի տիպերի ծագումնաբանության հարցում նկատի ունենալ նաև այս հանգամանքը:

---

[1] **Ղ. Ինճիճեան,** , նշվ. աշխ., էջ 52:

[2] Այս առումով տե՛ս **Ա. Պողոսյան,** Դերսիմի հայոց գորգագործական մշակույթի մասին /պատմաազգագրական ակնարկ/, «Էջմիածին», Ա.Էջմիածին, 2012, Ա, էջ 51-70, նույնի՝ Վասպուրականի հարավարևելյան գավառների հայոց գորգագործական մշակույթի մասին, «Բանբեր հայագիտության», Եր., 2014, թիվ 2-3. էջ 98-127:

[3] **Ռաֆֆի,** Ուղեգրություններ, Ճանապարհորդություն Թիֆլիսից մինչև Ագուլիս, Երկերի ժողովածու, հ.9, Եր., 1987, էջ 187:

[4] **Ռաֆֆի,** նշվ. աշխ., էջ 223:

Պատմական Կոգովիտի ու մերձակա գորգագործական կենտրոններին վերաբերող գորգերի տիպերի ծագումնաբանության հարցում պետք է հաշվի առնել մի շարք այլ գործոններ ևս:

ա/**Քոչվոր ցեղերի ամառային արոտավայրեր գնալն ու հետդարձը**: Մենք տարբեր առիթներով շեշտել ենք, որ այս կամ այն էթնիկական հանրույթի ստեղծած մշակութային ժառանգության հետ կապված ավանդույթների տարածման ու նաև յուրացման գործում չափազանց էական գործոն է քոչի ճանապարհին եղած գորգագործական կենտրոններին պարբերաբար հարաբերվելու անմիջական հնարավորությունները: Օրինակ՝ Արցախում՝ քոչի երթուղուն մերձակա գորգագործական կենտրոններում, տնայնագործները պատվերներ էին ստանում ամառային արոտատեղիներ բարձրացող քոչվոր մահմեդականներից՝ թարաքյամաններից ու ավշարներից՝ վճարի փոխարեն դրանցից ստանալով տվյալ գորգին կամ կարպետին անհրաժեշտ բրդի կրկնակի քանակություն[1]: Հասկանալի է, որ պատվիրված գորգերի թվում նկատելի տեղ պետք է ունեցած լինեին առաջին հերթին հենց այդ երթուղու վրա գտնվող գորգագործական կենտրոններին բնորոշ տիպերին պատկանողները:

բ/Ավարառություն: Սա անընդմեջ տեղի ունեցած մեծ ու փոքր դեպքերի շարան է և համատարած չափերի հասավ 1915-1922 թվականներին իրականացված Մեծ եղեռնի տարիներին: Դրա նկարագիրը տվել են բողոքական քարոզիչները. «**քրդական անկանոն ուժերը Ուրմիայի և շրջակա գյուղերի քրիստոնյաներից խլել են ամեն ինչ՝ սննդեղեն, գորգեր, հագուստ և ոսկյա զարդեր...»**[2]**:** Ընդ որում «քրիստոնյաներ» բառը այս դեպքում վերաբերում է միայն հայերին, քանի որ գորգագործական մշակույթը ասորիների մոտ բացակայում էր: Սա այն ճանապարհն է, որով Օսմանյան Թուրքիայի մահմեդական ցեղերի տներում կուտակվել էին հայոց կողմից ստեղծված հարյուր հազարավոր գորգեր, որոնք գորգավաճառականներն ու ուսումնասիրողները վերագրում են քրդերին կամ թուրքերին:

գ/Քուրդ վերնախավի համար գորգեր գործելու պարտականությունը: Խոսքն այստեղ այն շատ տարածված երևույթի մասին է, երբ քուրդ վերնախավից, հողատերերից ճորտային կախման մեջ գտնված հայ գյուղացու կինն ու աղջիկը «պետք է կատարեին աղայի տնային աշխատանքները՝ կար, լվացք, **գործվածքներ գործել** և

---

[1] **Ա. Պողոսյան,** Դաշտային ազգագրական նյութեր, տետր 1, էջ 86, տետր 2, էջ 44: Տե՛ս նաև՝ **Վ. Թաթիկյան**, Արցախի տոհմագորգերը, Երևան, 2004, թիվ 209 լուսանկարի բացատրություն:

[2] American Presbyterian Missionaries at Urmia, During the Great War, **Michael Zirinsky**, Ph.D, էջ 13 http://www.jaas.org/edocs/v12n1/zirinsky.pdf:

այլն»[1]: Այդպիսի իրավիճակի մասին որոշակի տեղեկություններ կան Կոգովիտին մերձակա Սալմաստի, Խոյի գավառների հայոց վերաբերյալ, և միանգամայն տրամաբանական է, որ այդ նույն կացությունը եղել է նաև Կոգովիտում: Պետք է նկատի ունենանք, որ, ինչպես վերը տեսանք, քրդերից բացի այդ նույն գավառներում հաստատված էին նաև եզդիներ ու թուրքական ծագումով ցեղեր, որոնք նույնպես ունեին այդօրինակ արտոնություններ[2]:

Այսպիսով, ակնհայտ է, որ պատմական Կոգովիտի ու հարևան գավառների հայոց գորգագործական մշակույթի ուսումնասիրման հարցը պահանջում է տարաբնույթ հետազոտությունների մի համալիր ամբողջություն, որի արդյունքում էլ հնարավոր կլինի որոշակիորեն բացահայտել դրանց բնորոշ գորգերի տիպերն ու մատնանշել նաև դրանց էթնիկական պատկանելիությունը: Չբացառելով հանդերձ ուշ միջնադարից այդտեղ հաստատված մահմեդական ցեղերի, հատկապես դրանցում գերակշռող քրդական ցեղերի կողմից իրենց կենցաղին անհրաժեշտ տարբեր տեսակի գործվածքներ գործելու հմտությունների առկայությունը՝ այնուհանդերձ գտնում ենք, որ գորգագործական մշակույթի առումով առանցքային նշանակություն ու տեղ է ունեցել հայ տարրը: Այս իմաստով, շեշտենք, որ բոլորովին էլ պատահական չէ, որ քրդական ցեղերի ստեղծած կարպետների որոշ տեսակներ հենց իրենք՝ քրդերը, տարբերակում են **«արմանի»՝,** այսինքն՝ հայկական անունով:[3]

---

[1] **Ա-Դո,** Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները, Եր., 1912, նշվ., էջ 277: Տես նաև **Հ.Պողոսյան,** նշվ. աշխ., էջ 49:

[2] **Գ. Սրվանձտյանց**, Թորոս Աղբար, Արևմտյան Հայաստանի մի շարք գավառների վիճակագրություն.- Երկեր հ. 2, Եր, 1982, էջ 503:

[3] **Пиралов А. С.,** Краткий очерк кустарных промыслов Кавказа, Спб., 1913, էջ 62-64.

ON DEMOGRAPHIC DESCRIPTION OF KOGOVIT AND REVELATION OF PRINCIPLES OF RUG MAKING TRADITIONS IN THE REGION

POGHOSYAN ASHKHUNJ
PhD in Historical Sciences, Associate Professor,
GSU Lecturer

The purpose of this article is to examine the rug making / weaving culture of Kogovit province of historical Armenia. Based on various evidence of Armenian rug making in Kogovit, the author finds that this region was one of the traditional centers of rug making / weaving in historical Armenia. However, in revealing its full image, it is important to unveil the cultural description of the separate ethnic communities established there at different times. In this respect, attention is also given to the vital activities of the majority of local population including Kurdish tribes who have also been involved in rug making / weaving since XVI-XVII centuries.

Keywords: *Cogovit, rug making / weaving culture, nomad, Bayazed, immigration, migration, elite.*

О ДЕМОГРАФИЧЕСКОМ ОБЛИКЕ КОГОВИТА И О ПРИНЦИПАХ ВЫЯВЛЕНИЯ ТРАДИЦИИ КОВРОТКАЧЕСТВА ЭТОГО РЕГИОНА

ПОГОСЯН АШХУНДЖ
Кандидат исторических наук,
Преподаватель ГГУ

Цель данной статьи является исследование культуры ковроткачества провинции Коговит исторической Армении. Основоваясь на разные источники, относящиеся к данной провинции, автор считает, что Коговит был одним из традиционных центров ковроткачества исторической Армении. Но при этом, необходимо также выяснить культурный облик тех этнических единиц, которые там обосноввовались в основном в XVI-XVII веках. В этом аспекте автор по возможности уделил внимание вопросам системы жизнеобеспечения и, в том числе, ковроткачества курдских племен, которые начиная с XVI-XVII веков, составили большинство населения Коговита.

Ключевые слова: *Коговит, ковроткачество, кочевник, Баязет, элита, иммиграция, переселение.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 18.04.2020թ.:
Հոդվածը գրախոսվել է 27.06.2020թ.: